



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ, 138-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՏՎՅԱԼ ԱԿՏԻ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 դեկտեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող) Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Մինասյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 138-րդ հոդվածի, ինչպես նաև այդ դրույթների հետ համակարգային

առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը (այսուհետ նաև՝ Կանոնակարգ) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի մայիսի 18-ից:

Կանոնակարգի՝ **«Խմբակցության լիազորությունները»** վերտառությամբ 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված է.

«1. Խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով՝
(...)

5) մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու»:

Կանոնակարգի վիճարկվող դրույթը չի փոփոխվել և (կամ) լրացվել:

Կանոնակարգի՝ **«Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունները»** վերտառությամբ 138-րդ հոդվածով սահմանված է.

«1. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ինչպես նաև նրանց պաշտոնը թափուր մնալու դեպքում:

2. Մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի թեկնածու առաջադրելու իրավունք ունի սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով որոշված խմբակցությունը: Թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

3. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը խմբակցությունների միջև բաշխվում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը՝ ըստ յուրաքանչյուր պաշտոնի համար ստացված գործակցի, որը հաշվարկվում է $Գ_{խ} = Ա_{խ} / (Պ_{խ} + 1)$ բանաձևով, որտեղ՝

1) Գխ-ն յուրաքանչյուր պաշտոնի համար խմբակցության ստացած գործակիցն է.

2) Ախ-ն խմբակցության անդամների ընդհանուր թիվն է.

3) Պխ-ն հերթական պաշտոնի համար խմբակցության գործակիցը հաշվելիս թեկնածու առաջադրելու իրավունքով խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների ընդհանուր թիվն է: Գործակիցների հաշվարկի սկզբում Պխ-ն հավասար է զրոյի:

4. Գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը վերապահվում է մշտական հանձնաժողովների նախագահներից կամ նրանց տեղակալներից մեկի թեկնածուին առաջադրելու իրավունքը: Հաջորդ պաշտոնում առաջադրելու իրավունքը վերապահվում է մյուս խմբակցությունների համեմատ առավել մեծ գործակից ունեցող խմբակցությանը: Հավասար՝ ամենամեծ գործակիցների դեպքում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի հերթական պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշվում է հավասար գործակիցներ ունեցող խմբակցությունների փոխհամաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վիճակահանությամբ: Գործակիցների հաշվարկը կրկնվում է մինչև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ վերջին պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշելը:

5. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը:

6. Մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուներն առաջադրվում են՝

1) Ազգային ժողովի առաջին նստաշրջանում՝ յուրաքանչյուր մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցի քննարկման սկզբում.

2) մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

7. (մասն ուժը կորցրել է 22.06.20 ՀՕ-309-Ն)

8. Մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով:

9. Մշտական հանձնաժողովի նախագահն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

10. Եթե մշտական հանձնաժողովի նախագահը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար առաջադրում է նոր թեկնածու:

11. Մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն ընտրվում է իրավասու խմբակցության ղեկավարի կամ քարտուղարի առաջադրմամբ՝ հանձնաժողովի որոշմամբ: Մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրությունն անցկացվում է հանձնաժողովի կազմը հաստատվելուց, ինչպես նաև նրա պաշտոնը թափուր մնալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11.1. Եթե մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, առաջադրում է նոր թեկնածու:

12. Եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը»:

2020 թվականի հունիսի 22-ին ընդունված ՀՕ-309-Ն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 7-րդ մասը ճանաչվել է ուժը կորցրած (1), իսկ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 8-րդ մասի «հարցը» բառը փոխարինվել՝ «հարցն Ազգային ժողովի նիստում» բառերով (2):

2022 թվականի ապրիլի 12-ին ընդունված ՀՕ-91-Ն օրենքով Կանոնակարգի 138-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ՝ 11.1-ին մասով. «11.1. Եթե

մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, առաջադրում է նոր թեկնածու:», իսկ Կանոնակարգի հիշյալ հոդվածի 12-րդ մասը՝ «Կանոնակարգով սահմանված» բառերից հետո լրացվել է «կարգով և» բառերով:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ նաև՝ Դիմող)՝ 2023 թվականի մարտի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով Կանոնակարգի վիճարկվող և դրանց հետ փոխկապակցված այլ դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը բարձրացնում է հետևյալ հարցադրումները.

«1. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «Մշտական հանձնաժողովներում **տեղերը բաշխվում են** խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների **պաշտոնները** խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:» նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը, արդյո՞ք հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովում որևէ այլ պաշտոնը (ներառյալ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը) ներառվում է խմբակցությանը հասանելիք տեղերի թվաքանակի մեջ:

2. Արդյո՞ք Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոն(ներ)ում թեկնածուներ առաջադրելու և այդ պաշտոն(ներ)ում ընտրությունների անցկացման՝ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ինչպես նաև 138-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերը ոչ իրավաչափ կերպով չեն սահմանափակում Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնության, առավելապես ընդդիմադիր խմբակցության իրավունքները: Այսինքն՝

Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնությունը կազմող խմբակցությունը (հիմնականում ընդդիմադիր խմբակցությունը) լրացուցիչ կախվածության մեջ է ընկնում կառավարող խմբակցությունից սահմանադրի կողմից իրեն վերապահված իրավունքն իրացնելիս»:

Դիմողի դիտարկմամբ՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված կարգավորումից բխում է, որ քաղաքական մեծամասնությունը և քաղաքական փոքրամասնությունը պահպանում են նույն հարաբերակցությունն Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմում, ինչպիսի հարաբերակցություն առկա է Ազգային ժողովի խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի դեպքում: Ըստ դիմողի՝ դա նաև նշանակում է, որ մշտական հանձնաժողովի կազմում խմբակցության ներկայացուցիչների թիվը չի կարող փոփոխվել՝ կախված այն հանգամանքից, թե խմբակցության ներկայացուցիչը հանդիսանում է տվյալ հանձնաժողովի նախագահ, տեղակալ, թե՛ պարզապես անդամ: Եթե մշտական հանձնաժողովի նախագահի տեղը վերապահվում է կոնկրետ խմբակցությանը, ապա այդ պաշտոնը հաշվառվում է հանձնաժողովում տվյալ խմբակցությանը հասանելիք տեղերի թվում:

Դիմողը նշում է, որ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով խմբակցությանը վերապահվել են երկու տարբեր իրավունքներ. մասնավորապես՝ 6-րդ կետով սահմանված է, որ խմբակցությունն իրավունք ունի Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու, իսկ 5-րդ կետով՝ իրեն հասանելիք մշտական հանձնաժողովի նախագահի (տեղակալի) պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք, այլ ոչ տվյալ պաշտոնում նշանակելու լիազորություն:

Դիմողը գտնում է, որ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, ինչպես նաև 138-րդ հոդվածի 12-րդ մասով ամրագրված իրավակարգավորումների պայմաններում «(...) լիակատար է դառնում ընդդիմադիր խմբակցության կախվածությունը կառավարող խմբակցությունից»:

Ըստ Դիմողի՝ «(...) ընտրվելու երաշխիքների բացակայությամբ և/կամ կամայական ընտրություններով (պաշտոնանկություններով) պայմանավորված գործընթացների արդյունքում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ ընդդիմադիր որևէ խմբակցություն չի ունենա մշտական հանձնաժողովում իրեն հասանելիք պաշտոնը այն պարագայում, երբ Ազգային ժողովի՝ քաղաքական մեծամասնությունը քաղաքական դրդապատճառներով կամ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, առանց որևէ հիմքի չի ընտրի մշտական հանձնաժողովների ընդդիմադիր խմբակցությունը ներկայացնող թեկնածուին»:

Դիմողը, մասնավորապես, նշում է. «(...) ընդդիմության կողմից խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացումը, ինչպես նաև իրեն՝ Սահմանադրությամբ արդեն իսկ տրված լիազորությունների ամբողջական ծավալով իրացումը չպետք է կախված լինի խորհրդարանական մեծամասնության կամքից և որևէ դեպքում չդառնա կառավարող խմբակցության հայեցողական լիազորություն: (...)

(...) Տերմինաբանության տեսանկյունից Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը օգտագործում է **«պաշտոնները բաշխվում են» տերմինները**, մինչդեռ վիճարկվող դրույթը և դրա հետ փոխկապակցված դրույթները կիրառում են **«թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինները**, որոնք ոչ միայն չեն համապատասխանում միմյանց, այլև **«թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինը ինքնին սահմանափակում և աղավաղում է «պաշտոնները բաշխվում են» տերմինը, քանի որ պաշտոնների բաշխումը ենթադրում է խմբակցության որոշման հիման վրա նշանակում, որը կախված չէ կառավարող խմբակցության կամքից, մինչդեռ (...) «թեկնածու առաջադրելու իրավունք»-ը տրամագծորեն հակառակն է»:**

Դիմողը խնդրում է որոշել Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 138-րդ հոդվածի, ինչպես նաև այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված նշված ակտի այլ դրույթների՝ Սահմանադրության 4-րդ հոդվածին, 5-րդ հոդվածի 1-ին մասին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 88-րդ հոդվածի 4-րդ մասին և 106-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող), մեջբերելով Սահմանադրության, ինչպես նաև Կանոնակարգի համապատասխան դրույթները, մասնավորապես, նշում է. «(...) օրենսդրի կողմից հստակ տարբերակվել են Ազգային ժողովի մարմիններում նշանակումները և ընտրությունները: **Ի տարբերություն մշտական հանձնաժողովի անդամի տեղում նշանակման դեպքի, մշտական հանձնաժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների պաշտոններում ընտրվելու դեպքում պատգամավորն այդ պաշտոնները կարող է ստանձնել Ազգային ժողովի կամահայտնության արդյունքում, այլ ոչ թե սուկ այն խմբակցության կամահայտնության արդյունքում, որի կազմում նա ընդգրկված է:**

Մշտական հանձնաժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների պաշտոններում Ազգային ժողովի կողմից ընտրվելու և ոչ թե մեկ խմբակցության կողմից նշանակվելու կառուցակարգի ամրագրումը, թերևս, **պայմանավորված է դրանց գործառույթներով, մասնավորապես, այն հանգամանքով, որ մշտական հանձնաժողովի նախագահը, Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները այդ կարգավիճակում գործելիս ներկայացնում են (համակարգում են) ոչ միայն այն խմբակցությունը և իրենց խմբակցության պատգամավորներին, այլ նաև այլ խմբակցություններում ընդգրկված պատգամավորներին, իսկ որոշ դեպքերում նաև ամբողջ Ազգային ժողովը»:**

Անդրադառնալով Դիմողի բարձրացրած՝ «պաշտոնները բաշխվում են» սահմանադրական և Կանոնակարգով նախատեսված՝ «թեկնածու առաջադրելու իրավունք» օրենսդրական ձևակերպումների հարաբերակցության հարցին՝ Պատասխանողը նշում է. «(...) **երկու նախադասություններից յուրաքանչյուրն ունի ինքնավար բովանդակություն (թեև երկու դեպքում էլ պետք է հաշվի առնվի խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունը):**

(...) Վիճարկվող դրույթը կիրառելով «թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինը հստակեցնում է ընթացակարգը, որի կիրառմամբ ապահովվում է բաշխման պահանջը: «Տեղերը բաշխվում են» կամ «Պաշտոնները բաշխվում են» տերմինները ինքնին չի նշանակում այդ պաշտոնների նշանակվել կամ ընտրվել, դրանց իրացումը տեղի է ունենում որոշակի ընթացակարգով»:

Պատասխանողը նշում է. «Օրենսդիրը ամրագրում է Ազգային ժողովի խմբակցությունների՝ նշված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքի պահպանումը մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը, որը հանդիսանում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում ընդդիմադիր խմբակցությունների ներկայացվածության կարևոր երաշխիք»:

Միաժամանակ, Պատասխանողը գտնում է, որ Դիմողն օրենքի համապատասխան նորմերի սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե նորմերի և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության, այլ այդ նորմերով սահմանված ընթացակարգերի կիրառման արդյունքում Դիմողի համար ենթադրյալ ոչ ցանկալի հետևանքների առաջացման համատեքստում:

Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթների սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով Դիմողի կողմից ներկայացված հիմնավորումները և ըստ այդմ՝ սահմանադրաիրավական վեճի շրջանակը, առանց Կանոնակարգի ամբողջ ծավալով 138-րդ հոդվածի սահմանադրականության հարցին անդրադառնալու, անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- արդյո՞ք Ազգային ժողովի խմբակցությունների՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ իրենց վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելուն առնչվող՝ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 138-րդ հոդվածի 5-րդ և 12-րդ մասերով ամրագրված իրավակարգավորումների գործողության պայմաններում երաշխավորվում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ մշտական հանձնաժողովներում տեղերի/պաշտոնների՝ ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության բաշխման պահանջը:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության փոխհամագործակցության առումով առանցքային է խորհրդարանական ընդդիմության դերի արժևորումը, ընդդիմության՝ խորհրդարանական կյանքին լիարժեք մասնակցությունն ապահովող սահմանադրաիրավական կառուցակարգերի ամրագրման և արդյունավետ գործողության միջոցով, ինչը ժամանակակից խորհրդարանական ժողովրդավարության կայացման միտումներից է: Ընդդիմության կարգավիճակի ձևական-իրավական առումով ինստիտուցիոնալացումը, այդուհանդերձ, դեռևս բավարար չէ նշված գործընթացը երաշխավորելու համար: Անհրաժեշտ է, որ խորհրդարանական մեծամասնությունը և փոքրամասնությունը (ընդդիմությունը) համագործակցեն պառլամենտարիզմին հարիր քաղաքական մշակույթի միջավայրում: Խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերը պետք է առաջնորդվեն այն գիտակցմամբ, որ կոչված են կենսագործելու ժողովրդի կամքը և, ըստ այդմ, սպասարկելու, առաջին հերթին, ոչ թե նեղ կուսակցական, անձնական, այլ հանրային/պետական շահը: Այդ առնչությամբ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից 2019 թվականի հունիսի 21-22-ի ընդունված «Խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերությունների պարամետրերը ժողովրդավարությունում. ստուգաթերթ»-ում (CDL-AD(2019)015), մասնավորապես, նշված է. «25. (...) Թե՛ մեծամասնությունը, թե՛ ընդդիմությունը պարտավոր են միասնաբար և բարեխղճորեն գործել հանուն քաղաքացիների/հանրային շահերի, որոնք ժողովրդավարական իշխանության լեգիտիմ աղբյուր են: Այդ հանձնառու վերաբերմունքը պետք է վեր դասվի ամեն ինչից, այդ թվում՝ քաղաքական առճակատման օրակարգից, թեպետ նման առճակատումը նույնպես բնականոն և անհրաժեշտ երևույթ է ժողովրդավարությունում: Մեծամասնությունը՝ հենց մեծամասնություն լինելու պատճառով, իշխանություն իրականացնելիս պարտավոր է ցուցաբերել ինքնազսպում և հարգանք դրսևորել ընդդիմության հանդեպ (...): Միևնույն ժամանակ, ընդդիմությունը կամ ընդդիմադիր պատգամավորները չպետք է չարաշահեն իրենց ընթացակարգային իրավունքները (...):»:

Խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության (ընդդիմության) միջև քաղաքական հավասարակշռության ապահովման համար *առանցքային է խորհրդարանական ընդդիմության լիազորությունների երաշխավորումը խորհրդարանական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ խորհրդարանի մարմիններում*: Այդ առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը, մասնավորապես, նշել է. «83. Եթե խորհրդարանում պատասխանատու պաշտոնների (խոսնակ, մշտական հանձնաժողովների ղեկավարներ ու անդամներ և այլն) բոլոր նշանակումները կարող են կատարվել մեծամասնության կողմից միանձնյա, ապա առկա է ռիսկ, որ ընդդիմությունն իսպառ դուրս կթողնվի խորհրդարանի կառավարման մարմիններից:

84. Ավելի լավ լուծում է այնպիսի կանոնի ամրագրումը, որն ընդդիմության համար կապահովի արդար պայմաններով խորհրդարանի պատասխանատու պաշտոններին հասանելիությունը (տես ԵԽԽՎ թիվ 1601 (2008) բանաձևը, § 2.3.1): (...):

86. Վենետիկի հանձնաժողովը ողջունում է պատասխանատու պաշտոններում համամասն ներկայացվածության սկզբունքը՝ որպես ընդդիմության իրավունքների ապահովման կարևոր գործիք (CDL- AD(2010)025, 2010 թվականի զեկույցը, §§ 63 – 66; CDL-AD(2009)025, § 18): (...):» (CDL-AD(2019)015):

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2008 թվականի հունվարի 23-ի թիվ 1601 (2008) բանաձևում («Ժողովրդավարական խորհրդարանում ընդդիմության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընթացակարգային ուղեցույց»), մասնավորապես, նշված է. «2.1.1. ընդդիմության անդամներն իրավունք ունեն մասնակցելու խորհրդարանի աշխատանքի կազմակերպմանը, նրանք կարող են ստանձնել խորհրդարանի (...) այլ պատասխանատու պաշտոններ, խորհրդարանի ղեկավար մարմինների կազմը պետք է արտացոլի համամասն ներկայացվածության սկզբունքը և խորհրդարանի (...) քաղաքական կազմը:

(...)

2.3. Ընդդիմությունը պետք է մասնակցի խորհրդարանական հանձնաժողովների աշխատանքներին .

2.3.1. մշտական հանձնաժողովների նախագահությունը պետք է բաշխվի խորհրդարանական խմբակցությունների միջև համամասն ներկայացվածության սկզբունքի հիման վրա (...): Կառավարության գործողությունների նկատմամբ մոնիթորինգի համար պատասխանատու հանձնաժողովների նախագահությունը, ինչպիսիք են բյուջեի և ֆինանսների հանձնաժողովը, աուդիտի հանձնաժողովը կամ անվտանգության և հետախուզության ծառայությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը, պետք է տրամադրվի ընդդիմության ներկայացուցչին:

2.3.2. Ցանկացած հանձնաժողով՝ մշտական, թե ժամանակավոր, պետք է ձևավորվի համամասն ներկայացվածության սկզբունքի հիման վրա»:

Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի խմբակցությունները պարտավոր են գիտակցել, որ այն իշխանությունը, որի իրականացման լիազորություններով օժտված են, ուղղված է ժողովրդի կամահայտնության արդյունքում ձևավորված Ազգային ժողովի սահմանադրաիրավական առաքելությունը կյանքի կոչելուն:

4.2. Անդրադառնալով Ազգային ժողովի սահմանադրաիրավական առաքելության կենսագործման առումով առանցքային դերակատարություն ունեցող խորհրդարանական մարմինների, մասնավորապես՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների առաքելության վերհանման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջիններս Ազգային ժողովի առանձին գործառույթների իրականացմանն օժանդակող մարմիններ են, որոնց գործունեության արդյունավետության նախապայման է խորհրդարանական խմբակցությունների՝ Ազգային ժողովի սահմանադրական առաքելության իրականացման ընդհանուր նպատակի շրջանակում կայուն համագործակցությունը: Այսպես, Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև

խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ: Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով:

Սահմանադրի կողմից նախանշվել են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների սահմանադրական իրավասության շրջանակները, որոնց օրենսդրական մանրամասնումը տեղ է գտել Կանոնակարգում: Ազգային ժողովի հանձնաժողովներին վերապահված է խորհրդարանի գործառնությունների իրականացմանն օժանդակելու առաքելություն Ազգային ժողովի իրավասությանը վերաբերող առանցքային հարցերի ոլորտային համակարգման նպատակով, ինչի շնորհիվ Ազգային ժողովի հանձնաժողովները ներկայանում են որպես խորհրդարանական ուժերի միջև ոլորտային քննարկումների ապահովման հարթակներ: Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 6-ի՝ «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ԱԺՌ-001-Ն որոշմամբ ստեղծվել են տասներկու մշտական հանձնաժողովներ:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում խորհրդարանական ուժերի հավասարակշռումն ապահովելու նպատակով Սահմանադիրը նախանշել է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ձևավորման կարգի առանցքային սկզբունքները, որոնք ընկած են մշտական հանձնաժողովների ձևավորման կարգի օրենսդրական մանրամասնման հիմքում: Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

Սահմանադրական դադարանը փաստում է, որ Սահմանադրության հիշյալ նորմերն ուղղված են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում խորհրդարանական ուժերի՝ ժողովրդից ստացած քվեին համաչափ ներկայացվածության ապահովմանը, ինչով պայմանավորված է դրանից բխող համամասնությունը պահպանելու հրամայականը: Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում համապատասխան պաշտոնները բաշխելիս Սահմանադրության վերոնշյալ նորմերով ամրագրված՝ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի

համամասնությունից ցանկացած շեղում կձևախեղի ժողովրդի՝ Ազգային ժողովի ընտրությամբ արտահայտված կամահայտնության արդյունքը, Ազգային ժողովի՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ ժողովրդի ներկայացուցչական մարմնի բնույթը:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադիրն ամրագրել է **հրամայական պահանջ՝** Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում պետք է ապահովվի խորհրդարանական ուժերի **համամասն ներկայացվածությունը՝** Ազգային ժողովի խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների անդամների տեղերի, մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համամասն բաշխման միջոցով: Սահմանադրի կողմից նախանշված՝ մշտական հանձնաժողովների ձևավորմանն ու գործունեությանն առնչվող կարգավորումների համատեքստում սահմանադրական հրամայականն է՝ **մշտական հանձնաժողովներում տեղերը պետք է բաշխվեն ըստ խմբակցություններում ընդգրկված պարզամավորների թվի համամասնության, հեղևաբար՝ մշտական հանձնաժողովների ձևավորմանն առնչվող օրենսդրական կարգավորումները պետք է ուղղված լինեն նշված սահմանադրաիրավական պահանջի գործնական ապահովմանը և պետք է մեկնաբանվեն ու կիրառվեն բացառապես վերջինիս էությանը և նպատակին համահունչ:**

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ գործածված «տեղերը բաշխվում են» և երկրորդ նախադասության մեջ գործածված «պաշտոնները (...) բաշխվում են» ձևակերպումների առնչությամբ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններից յուրաքանչյուրի բովանդակությանը ձևական/մեխանիկական մոտեցում դրսևորելու պայմաններում «տեղերը բաշխվում են» ձևակերպումը վերաբերելի է մշտական հանձնաժողովի անդամներին, իսկ «պաշտոնները (...) բաշխվում են» ձևակերպումը՝ մշտական հանձնաժողովների նախագահներին: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններն օրգանական կապի մեջ են, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ «տեղեր» եզրույթը կարող է մեկնաբանվել այնպես, որ, մշտական

հանձնաժողովի անդամներից բացի, ներառի նաև մշտական հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին՝ նկատի առնելով նաև, որ համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը հանդիսանում են այդ հանձնաժողովի անդամներ:

Այդ համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ վերոնշյալ սահմանադրական սկզբունքի ապահովման նպատակով մշտական հանձնաժողովների կազմավորման կարգը սահմանելիս օրենսդիրը տարբերակել է մշտական հանձնաժողովի անդամի տեղը, նախագահի և նրա տեղակալի պաշտոններն զբաղեցնելու կարգերը:

Այսպես, ըստ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ *խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու:*

Սահմանադրական դատարանը փաստում է, որ անդամակցելով մշտական հանձնաժողովին և ներկայացնելով իր խմբակցությունը՝ պատգամավորն անմիջականորեն իրացնում է իր պատգամավորական մանդատը: Պատգամավորների անդամակցությունը խորհրդարանական հանձնաժողովներին բխում է վերջիններիս կարգավիճակից, պատգամավորական մանդատի իրացման ձևերից մեկն է, որը ներառում է նաև խորհրդարանական հանձնաժողովներում վերջիններիս կողմից ծավալվող գործունեությանն առնչվող իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, Կանոնակարգի՝ պատգամավորի *իրավունքները* սահմանող 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ պատգամավորն իրավունք ունի համապատասխանաբար՝ ընդգրկվելու մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքային խմբի կազմում, ընդգրկվելու իր հանձնաժողովի ստեղծած ենթահանձնաժողովի կազմում, ծանոթանալու Ազգային ժողովին, իր խմբակցությանը կամ հանձնաժողովին հասցեագրված ցանկացած փաստաթղթի, բացառությամբ անվանական կամ անձնական նյութերի, ինչպես նաև պետական գաղտնիք պարունակող այնպիսի տեղեկության, որին իրավասու չէ իրազեկվելու: Կանոնակարգի՝ պատգամավորի *պարտականությունները* սահմանող 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,

2-րդ, 3-րդ կետերի համաձայն՝ պատգամավորը պարտավոր է համապատասխանաբար՝ ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում, բացառությամբ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի, մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի նիստերին, իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին:

Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացում օրենսդիրը նախատեսել է հանձնաժողովի անդամի մասով՝ նշանակման կարգ, նախագահի և նրա տեղակալի մասերով՝ ընտրության կարգ:

Մշտական հանձնաժողովի անդամների տեղերի բաշխման պայմաններում խմբակցությունն իր ներկայացուցիչներին՝ պատգամավորներին, անմիջականորեն նշանակում է իրեն վերապահված տեղերում. այս իրավահարաբերությունը թե՛ սուբյեկտային, թե՛ փուլային զարգացման առումով էականորեն տարբերվում է մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնների զբաղեցման իրավահարաբերություններից, որոնց պայմաններում խմբակցության դերը սահմանափակվում է իրավահարաբերության սկզբնական փուլում մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությամբ:

Դիմողի կողմից բարձրացված սույն տարբերակման իրավաչափությունը գնահատելու առումով Սահմանադրական դատարանը կարևորում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի անդամի, նախագահի և նրա տեղակալի իրավական կարգավիճակների միջև տարբերությունների վերհանումը: Այսպես, Կանոնակարգի՝ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները սահմանող 13-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից ակնհայտ է, որ մշտական հանձնաժողովի նախագահը, ի տարբերություն մշտական հանձնաժողովի անդամի, օժտված է նաև

կազմակերպահրավական լիազորություններով և իրականացնում է հանձնաժողովի աշխատանքի համակարգմանն առնչվող ներքին կազմակերպական, ինչպես նաև հանձնաժողովի և Ազգային ժողովի այլ մարմինների, քարտուղարության փոխհարաբերությունների համակարգմանն ուղղված արտաքին կազմակերպական լիազորություններ: Մշտական հանձնաժողովի նախագահը համակարգում է մշտական հանձնաժողովում ընդգրկված խմբակցությունների ներկայացուցիչների աշխատանքը, ինչպես նաև հանձնաժողովի և Ազգային ժողովի այլ մարմինների համագործակցությունը:

Մշտական հանձնաժողովի նախագահի կազմակերպահրավական լիազորություններն ուղղված են բացառապես հանձնաժողովի գործունեության համակարգմանը: Մշտական հանձնաժողովի նախագահի իրավական կարգավիճակի առանձնահատկությունն է նաև այն, որ վերջինս ի պաշտոնե անդամակցում է Ազգային ժողովի խորհրդին՝ ներկայացնելով համապատասխան հանձնաժողովը, և որպես Ազգային ժողովի խորհրդի անդամ ունի լիազորություններ, որոնք առնչվում են Ազգային ժողովի գործունեությանը և չեն սահմանափակվում միայն համապատասխան հանձնաժողովի գործունեության համակարգմամբ: Այսպես, Կանոնակարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի խորհուրդն իրականացնում է Ազգային ժողովի գործունեությանն առնչվող մի շարք լիազորություններ, որոնցից են Ազգային ժողովի հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը հաստատելը, Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը սահմանելը, Սահմանադրության 168-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելը, Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքը և կանոնադրությունը հաստատելը և այլն:

Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված անդամը: Ըստ այդմ՝ մշտական հանձնաժողովի

նախագահի տեղակալի կարգավիճակային տարբերությունը հանձնաժողովի անդամի կարգավիճակից պայմանավորված է մշտական հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու ժամանակահատվածում վերջինիս փոխարինելու լիազորությամբ:

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 11-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն ընտրվում է իրավասու խմբակցության ղեկավարի կամ քարտուղարի առաջադրմամբ՝ հանձնաժողովի որոշմամբ: Օրենսդիրը, հաշվի առնելով մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնից բխող լիազորությունների շրջանակը, հիշատակված պաշտոնի զբաղեցման կարգը պայմանավորել է տվյալ հանձնաժողովի որոշմամբ՝ կարևորելով մշտական հանձնաժողովի՝ որպես կոլեգիալ մարմնի, իրավական կարգավիճակը:

Վերոնշյալի առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ համապատասխան օրենսդրական կարգավորումների տարբերակվածությունն ինքնին չի վկայում դրանց՝ Սահմանադրությանը հակասելու մասին: **Օրենսդրի կողմից Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրության կարգ նախատեսվելը թելադրված է խորհրդարանական բոլոր ուժերի շահերի հավասարակշռմամբ և հիմնավորված է մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրավական կարգավիճակների առանձնահատկություններով: Ի վերջո, Ազգային ժողովը չի կարող բացարձակապես մասնակցություն չունենալ Կանոնակարգի 2-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ իր առանցքային մարմնի՝ մշտական հանձնաժողովի ձևավորման և կառավարման, տվյալ դեպքում՝ մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության գործընթացին: Այլ հարց է, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում համապատասխան պաշտոնները բաշխելիս պարտադիր կարգով պետք է հաշվի առնվի Ազգային ժողովի խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունը:**

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից Կանոնակարգում ամրագրված՝ մշտական հանձնաժողովի անդամի տեղը, մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոններն զբաղեցնելու կարգերի տարբերակումը համահունչ է Սահմանադրության 106-րդ

հողվածի 2-րդ մասով ամրագրված ըստ պատգամավորների թվի համամասնության բաշխման պահանջին:

Կանոնակարգի՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրմանն առնչվող դրույթներում գործածված «խմբակցությունն իրավունք ունի», «իրավունքն անցնում է» ձևակերպումների առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջիններիս առկայությունը դեռևս չի վկայում, որ խմբակցությունները՝ մշտական հանձնաժողովներում իրենց ներկայացվածությունը (համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնների մասով) ապահովելուն ուղղված լիազորություններն իրականացնելու հարցում ունեն *բացարձակ հայեցողություն:* Ընդ որում՝ խոսքը վերաբերում է ոչ թե այս կամ այն անձի թեկնածությունն առաջադրելու հայեցողությանը, որը համապատասխան խմբակցության հայեցողական իրավասության տիրույթում լուծվող հարց է, այլ մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոններում թեկնածուների առաջադրման լիազորությունն իրացնելուն: Սահմանադրի կողմից Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պահանջն *իմպերատիվ է*, ուստի՝ *դրա կենսագործումը չի կարող կախվածության մեջ դրվել Ազգային ժողովի համապատասխան խմբակցության բացարձակ հայեցողությունից:*

Առհասարակ հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրությամբ ամրագրում ստացած նորմերով սահմանված պարտադիր պահանջների կենսագործումն ապահովող օրենսդրական կառուցակարգերը չեն կարող հիմնվել բացարձակ հայեցողական լիազորությունների վրա՝ անտեսելով այդպիսի լիազորություններով Սահմանադրությամբ նախանշված շրջանակի նկատմամբ հեղինակության ազդեցությունը: Հանրային իշխանության մարմինների լիազորությունները բխում են վերջիններիս սահմանադրական գործառույթներից և ուղղված են դրանց իրականացմանը, հեղինակար՝ հանրային իշխանության մարմինների գործառույթների իրականացման ապահովմանն ուղղված լիազորությունները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ խաթարվի բուն սահմանադրական գործառույթի էությունն ու դրա կենսագործման նպատակը: Սահմանադրական դատարանն

արձանագրում է, որ հանրային իշխանության մարմնի սահմանադրական գործառույթի կենսագործումը չի կարող կախված լինել հանրային իշխանության որևէ մարմնի բացարձակ հայեցողությունից: Անգամ այն դեպքերում, երբ օրենսդրական ձևակերպումներն այնպիսին են, որ հանրային իշխանության մարմնին օրենքով վերապահված լիազորությունները կարող են մեկնաբանվել որպես հայեցողական, դրանք պետք է ընկալվեն որպես համապատասխան մարմնի սահմանադրական գործառույթների և առաքելության իրականացման նպատակով իրացվող պարտադիր լիազորություններ և իրացվեն այդ մարմնի սահմանադրական գործառույթների ոգուն համահունչ:

Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 31-ի ՍԴՈ-1518 որոշման մեջ նշված է. «(...) Հանրապետության նախագահի լիազորությունների տարանջատումը նշանակում է, որ Հանրապետության նախագահը **չի կարող հայեցողաբար փոփոխել իր լիազորությունների էությունը կամ որ նույնն է՝ պարտադիր լիազորությունները փաստացի փոխակերպել հայեցողական լիազորությունների, ինչպես նաև չի կարող հրաժարվել իրականացնել իր պարտադիր լիազորությունները հայեցողական լիազորությունների գործադրմամբ կամ որևէ այլ պատճառաբանությամբ:** Նշվածը վերաբերելի է նաև սահմանադրական ցանկացած այլ մարմնի, իրավասու սուբյեկտի կամ պաշտոնատար անձի»:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ վերոնշյալ իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև սույն գործով՝ Ազգային ժողովի խմբակցության՝ որպես Սահմանադրության 105-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը նպաստող մարմնի, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորության իրականացման մասով:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ **Ազգային ժողովի խմբակցությունը չի կարող հրաժարվել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում իր համամասն ներկայացվածությունը (մշտական հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի պաշտոնների մասով) ապահովելու սահմանադրի կամքը կենսագոր-**

ծելուց՝ իրականացնելով իր համապատասխան օրենսդրական լիազորություններն այնպես, որ վերջիններիս հաղորդվի բացարձակ հայեցողական բնույթ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի խմբակցությունների՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պահանջի կենսագործումն ապահովելուն ուղղված համապատասխան օրենսդրական լիազորություններն ունեն պարտադիր բնույթ. խմբակցությունները պարտավոր են ձեռնարկել Սահմանադրի վերոնշյալ պահանջի կենսագործումն ապահովելուն ուղղված անհրաժեշտ քայլեր:

Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համահունչ է մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ ըստ խմբակցություններում ընդգրկված պարզամավորների թվի համամասնության բաշխման սկզբունքին այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե բացարձակ հայեցողական, այլ **պարտադիր լիազորությունն է:**

4.3. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 138-րդ հոդվածի համապատասխան իրավակարգավորումների հարաբերակցության հարցին: Այսպես, Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ամրագրված կարգավորումը վերաբերում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոններն զբաղեցնելու **կարգին**. խմբակցության՝ նշված նորմով ամրագրված թեկնածու առաջադրելու պահանջը ենթադրում է, որ այդ պաշտոններն զբաղեցվում են ընտրությամբ: Կանոնակարգի 138-րդ հոդվածով ամրագրված կարգավորումները սահմանում են մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրության կարգի կենսագործման կառուցակարգերը և գերազանցապես **ընթացակարգային** բնույթ ունեն:

Դիմողի դիրքորոշումներից պարզ է դառնում, որ վերջինիս համար սահմանադրականության առումով խնդրահարույց է առավելապես մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրության կարգը, իսկ Կանոնակարգի 138-րդ հոդվածով ամրագրված ընթացակարգային կարգավորումները Դիմողի համար սահմանադրականության առումով խնդրահարույց են այնքանով, որքանով միտված են մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրության կարգի կենսագործմանն ու անմիջական ազդեցություն են գործում խմբակցությունների համամասն ներկայացվածության պահանջն ապահովելու վրա:

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը:

Այդ առնչությամբ, նկատի առնելով Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման 4.2-րդ կետում արտացոլված եզրահանգումն առ այն, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության *պարտադիր լիազորությունն է*, սույն որոշման 4.2-րդ կետում արտացոլված արձանագրումն առ այն, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններն օրգանական կապի մեջ են, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ «տեղեր» եզրույթը կարող է մեկնաբանվել այնպես, որ, մշտական հանձնաժողովի անդամներից բացի, ներառի նաև մշտական հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին՝ նկատի առնելով նաև, որ համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը հանդիսանում են այդ հանձնաժողովի անդամներ, ինչպես նաև փաստելով, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններում շեշտադրումը կատարված է մշտական հանձնաժողովներում տեղերը, մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները բաշխելիս *խմբակցու-*

թյուններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության վրա, որից ցանկացած շեղում կբովանդակազրկի Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված նախադասություններն ինչպես առանձին վերցված, այնպես էլ համակցության մեջ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքը **զիջելու** վերաբերյալ՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դրույթը համատեղելի չէ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ մշտական հանձնաժողովներում տեղերի/պաշտոնների՝ ըստ պատգամավորների թվի համամասնության բաշխման սկզբունքի հետ: Խմբակցությունների միջև բաշխված տեղերի պատկանելիությունն իրավասու խմբակցություններին չի կանխորոշվում վերջիններիս կամարտահայտությամբ, այլ պայմանավորված է Սահմանադրի իմպերատիվ պահանջով, հետևաբար՝ **խմբակցությունները չեն կարող զիջել մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ իրենց վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությունը:** Այդ առնչությամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման լիազորությունը որոշելուց հետո փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց լիազորությունը միմյանց զիջելու հնարավորություն, հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

Սահմանադրական դատարանն այս համատեքստում հարկ է համարում արձանագրել նաև, որ վերը նշված դատողությունը վերաբերում է բացառապես մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ իրենց վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությունն այլ խմբակցության զիջելու արգելքին, սակայն դրանով չի կարող սահմանափակվել համապատասխան խմբակցության կողմից մշտական հանձնաժողովի նախագահի և

նրա տեղակալի թեկնածուի ընտրության հարցում այդ խմբակցության հայեցողությունը, որի իրականացման շրջանակը կարող է սահմանափակվել բացառապես մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի թեկնածուի նկատմամբ ընդհանուր բնույթի սահմանափակումներով:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Ազգային ժողովի խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ իրենց վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքի (Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ պարտադիր լիազորության) փոխհամաձայնությամբ *փոխանակումը*, որի հնարավորությունը նախատեսված է Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասով, *չպետք է հանգեցնի Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ մշտական հանձնաժողովներում համամասն ներկայացվածության սկզբունքի խախտմանը, դրա ձևախեղմանը:*

4.4. Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ եթե Ազգային ժողովի խմբակցությունը Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է Կանոնակարգի հիշյալ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը: Նշված օրենսդրական կարգավորմամբ գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանն իրավասու խմբակցության փոխարեն մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրավասու խմբակցությանը վերապահված թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու հնարավորություն է ընձեռվել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ *հիշյալ օրենսդրական կարգավորումը համահունչ չէ Սահմանադրական դատարանի այն եզրահանգմանը, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության պարտադիր լիազորությունն է: Իրավասու խմբակցությունը չի կարող*

հրաժարվել մշտական հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի՝ սահմանադրական պահանջի ուժով իրեն պատկանող համապատասխան պաշտոններում թեկնածուներ առաջադրելու պարտադիր լիազորությունից (խմբակցությունների միջև համապատասխան լիազորության փոխհամաձայնությամբ փոխանակման հնարավորությամբ):

Այդ առնչությամբ, նկատի առնելով նաև Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունում գործածված «տեղերը բաշխվում են» և երկրորդ նախադասությունում գործածված «պաշտոնները (...) բաշխվում են» ձևակերպումների բովանդակության առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման 4.2-րդ կետում արտացոլված մոտեցումը, Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման 4.3-րդ կետում արտացոլված այն փաստումը, որ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկու նախադասություններում շեշտադրումը կատարված է մշտական հանձնաժողովներում տեղերը, մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները բաշխելիս խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության վրա, որից ցանկացած շեղում կբովանդակազրկի Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված նախադասություններն ինչպես առանձին վերցված, այնպես էլ համակցության մեջ՝ հավելելով, որ նման պայմաններում, մշտական հանձնաժողովների նախագահների տեղակալների պաշտոնները բաշխելիս Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված համամասնությունից շեղումը կխեղաթյուրի Սահմանադրության հիշյալ նորմի բովանդակությունը՝ փաստելով, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված կարգավորումները (այդ թվում՝ բանաձևը) վերաբերելի են ինչպես մշտական հանձնաժողովների նախագահների, այնպես էլ նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրումներին, կիրառելի են վերջիններիս նկատմամբ, երկու պաշտոնների մասով էլ նույնաբովանդակ են՝ *Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի որևէ այլ խմբակցություն, այդ թվում՝ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությունը, մեկ այլ խմբակցությանը վերապահված՝ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշ-*

տրոններում թեկնածուներ առաջադրելու լիազորության (Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ պարտադիր լիազորության) իրացման իրավասու սուբյեկտ չէ: Խնդրո առարկա հարաբերություններում Ազգային ժողովի իրավասու խմբակցությունն այն խմբակցությունն է, որին համամասն ներկայացվածության սահմանադրական սկզբունքով պաշտոնների բաշխմամբ ի սկզբանե վերապահված են մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնները, և իրավասու խմբակցության՝ նշված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությունը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

Ամփոփելով վերոնշյալը՝ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասով ամրագրված կարգավորումների գործողության պայմաններում խեղաթյուրվում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ մշտական հանձնաժողովներում պաշտոնների՝ ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության բաշխման Սահմանադրի պահանջը, հետևաբար՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի՝ իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե իրավունքն է, այլ պարտադիր լիազորությունը:

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է Ազգային ժողովի խմբակցու-

թյունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը միմյանց զիջելու հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող:

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 12-րդ մասը ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող:

4. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի մայիսի 31-ը՝ հնարավորություն ընձեռնելով Ազգային ժողովին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշմանը:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

19 դեկտեմբերի 2023 թվականի
ՍԴՈ-1708